իր աչեւոր գլուխը խոնարհէ: Երկինք ու երկիր եւ ծիրանի ծով աւետիք պիտի տան հայոց աշխարհին.

Ցնծա՛, բիւրվիշապ, Հայաստան աշխարհ,
Փրկութեան արեւ վահագնիդ տեսար:

Մի ուրիշ առասպել, ժողովրդական մի հին աւանդութիւն եւս գրական մշակման է ենթարկել Յովհաննիսեան, իր «Լուսաւորչի կանթեղը» վերնագրով ոտանաւորի մէջ: Բանաստեղծը հաւուն տարիքի մէջ է, այլեւս հրաշքների չի հաւատում, հինաւուրց առասպելները նրա աչքում թովչութիւն չունին: Եւ սակայն, «մի զրոյց, որ սրբութեան դրոշմով դարէ ի դար հասել է մեզ պապերից ու իբրեւ նուիրական գանձ խնամով պահպանուել մոռացութեան խաւարից», նա, այդ զրոյցը, «սրբազան ակնածութեան զգացում» է յարուցանում բանաստեղծի հոգում: Դա՝ Արագածի կատարին պլպլացող կանթեղն է Լուսաւորչի.

Այն մեր հոգու լուսոյ ջահն է նուիրական,
Ողջոյն ազգի կենդանութեան հրաշխիք:

Այս տողերով էլ բանաստեղծը վերջացնելու էր ոտանաւորը: Յաջորդող երկու տողը բնագրօսիկ յաւելում են, ոչ-անկեղծ կրօնական շաղախով շախաղուած: Թումանեան եւ Թէքէեան աւելի մեծ յաջողութեամբ են մշակել նոյն առասպելը:

Կրօնամիտ, աւելի շուտ՝ եկեղեցամիտ ոտանաւորներ եւս ունի Յովհաննիսեան, գրըւած աշխարհաբարով, այս կամ այն տօնի առթիւ: Այդ կարգին են պատկանում՝ աշուղական, մխիթարեան-բուրջինեան «Դարեր եկան, դարեր անցան, էջմիածի՜ն», «Անլոյս խաւարը, չարութեան ոգին», «Աւետարան», «Տիրամայր» եւ մի քանի նման ոտանաւորները: Դրանք արտայայտութիւնը չեն կրօնական խոր ապրումների եւ յոյզերի, որոնք մի ուրիշ գրչի տակ կարող էին թերեւս բանաստեղծական ներշնչման առարկայ դառնալ — յիշե՛լ Նարեկացին, յիշել մեր շարականները — այլ պահպանողական, եկեղեցամիտ տրամադրութիւնների արտայայտութիւն են, վանական շրջապատին տրուած մի-մի տուրք, մատուցուած հանդիսաւոր ժամերի:

Այդ ոտանաւորները, դէթ նրանց մի զգալի մասը, Յովհաննիսեան չէր գրել ապահովաբար, եթէ իր կեանքն ապրած ու շնչած չլինէր վանքի մթնոլորտում:

Յովհաննիսեան ունի մի շարք ուրիշ ոտանաւորներ եւս — նուիրուած բնութեան, առօրեայ կենցաղին, պատմական անցեալին, գաղափարական հարցերի, եւայլն: Դրանք աչքի չեն ընկնում խորութեամբ եւ ինքնատպութեամբ:

* * *

Ամփոփենք մեր խօսքը Յովհաննիսեանի ստեղծագործութեան մասին.—

1) Յովհաննէս Յովհաննիսեան արեւելահայ նոր բանաստեղծների ընտանիքի աւագ անդամն է եւ դրանով իսկ իր տեղն է շահել հայ բանաստեղծութեան պատմութեան մէջ:

2) Յովհաննիսեան զուտ քնարերգակ է: Պատանի եւ վաղ երիտասարդութեան հասակում երգել է առաւելապէս անհատական սէր: Հետագայ բանաստեղծութիւնները համակուած են վշտով — անհատական եւ հանրային վըշտով:

3) Յովհաննէս Յովհաննիսեան առաջինը լինելով մեր նոր բանաստեղծներից, մշակել է ժողովրդական մոտիւներ: Իր այդ կարգի եւ զուտ ոտանաւորներն են ամենից արժէքաւորները:

4) Յովհաննիսեանի տաղանդը օժտուած չէ միջակից վեր կարողութեամբ:

5) Յովհաննիսեանի քնարական բանաստեղծութիւնները վշտով ու թախիծով համակուած լինելով մէկտեղ, անյուսօրէն յոռետես չեն: Լաւագոյն ապագայի յոյսը չէ մարած նրա ամենէն թախծոտ երգերի մէջ անգամ: Հաւա՛տ ունի իր ժողովուրդի եւ հայրենիքի ապագայի համար: Անգա՛մ եթէ «աւերուի հայրենի տունն հիմնայատակ», բայց՝ «քանի հուրն առկայծում է մոխրի տակ»,

Նորա կորուստն, ո՜հ, մի՛ ողբալ դու սգաւոր.
Իբրեւ փիւնիկ նա կը յառնէ անշուշտ մի օր»:
(«Հաւատում եմ»):

Եւ կամ հետեւեալ վերջին երկտողը («Մենք միասին գնում էինք ճանապարհ»).

Ժամը կը գայ, կը դադարի փոթորիկ,
Եւ յաղթութիւն կը վաստակեն մեր որդիք:

(Վերջ)